

ԿՈԴ  
050.0117 Ն. 12.07.22

12 հուլիսի 2022 թվականի թիվ 117-Ն

**ԲԱՆԿԵՐԻ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱԿԱՑԻԿԼԻԿ ՇԵՄԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
(2022 թվականի երկրորդ եռամսյակ)**

**Նպատակ ունենալով** ապահովել ֆինանսական համակարգի կայունությունը,  
**ղեկավարվելով** «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին»  
օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով և 20-րդ հոդվածի «ե» կետով, «Բանկերի և բանկային  
գործունեության մասին» օրենքի 54.1-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի  
Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2019 թվականի փետրվարի 4-ի թիվ  
16-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի  
սահմանաչափից բարձր շեմերի սահմանման և հաշվարկման կարգով»՝ Հայաստանի  
Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է .**

1. Բանկերի կապիտալի հակացիկլիկ շեմը սահմանել ռիսկով կշռված ակտիվների 0%-ի  
չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

**Հայաստանի Հանրապետության  
կենտրոնական բանկի նախագահ**  
2022թ. հուլիսի 13  
Երևան

**Մարտին Գալստյան**

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Կապիտալի հակացիկլիկ շեմի (2022թ. երկրորդ եռամսյակ)

**2022 թվականի հուլիսի 12-ի նիստում ԿԲ խորհուրդը որոշեց կապիտալի հակացիկլիկ շեմը սահմանել ռիսկով կշռված ակտիվների 0%-ի չափով:**

Համաձայն [«Բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափից բարձր շեմերի սահմանման և հաշվարկման»](#) կարգի 12-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը յուրաքանչյուր եռամսյակ սահմանում է կապիտալի հակացիկլիկ շեմը (այսուհետ նաև՝ կապիտալի հակացիկլիկ բուֆեր (ԿՀԲ)): Կենտրոնական բանկը ԿՀԲ-ն սահմանելիս առաջնորդվում է [«Կապիտալի հակացիկլիկ շեմի սահմանման հիմքում ընկած ընդհանուր մեթոդաբանությունը»](#) փաստաթղթի դրույթներով, համաձայն որի, ԿՀԲ չափը սահմանելիս Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համար հիմք են հանդիսանում Բազելյան մեթոդաբանությամբ գնահատված վարկեր/ՀՆԱ ցուցանիշի ճեղքվածքը, համակարգային ռիսկի զարգացումները բնութագրող ֆինանսական ցիկլի ինդեքսը և վաղ ահազանգման այլ ցուցանիշներ:

Կապիտալի հակացիկլիկ շեմի վերաբերյալ որոշումը կայացնելիս Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն առաջնորդվել է վարկավորման և ֆինանսական շուկայի զարգացումների համապարփակ վերլուծությամբ: Մասնավորապես՝

1. 2022թ. երկրորդ եռամսյակի համար գնահատված վարկեր/ՀՆԱ ցուցանիշը նախորդ եռամսյակի համեմատ աճել է և կազմել մոտ 70.5%<sup>1</sup>: Այս ցուցանիշի համար Բազելյան կոմիտեի մեթոդաբանությամբ հաշվարկված երկարաժամկետ տրենդից շեղումը նվազել է և կազմել մոտ -2.5 տոկոսային կետ: Հաշվարկված շեղումը (վարկեր/ՀՆԱ ճեղքվածք) ԿՀԲ որոշումների կայացման գործընթացում ծառայում է որպես մեկնակետ, և վերջնական որոշում կայացնելիս ԿԲ-ը դիտարկում է նաև այլ վաղ ահազանգման ցուցանիշներ, որոնցից են ֆինանսական ցիկլի ինդեքսը, վարկավորման ընդհանուր և ըստ ոլորտների աճի տեմպերը, անշարժ գույքի շուկան բնութագրող ցուցանիշները և այլն:

<sup>1</sup> Ֆինանսական հատվածի կողմից տնտեսությանը տրամադրված վարկային պորտֆելի (ներառյալ լիզինգը և ֆակտորինգը) կշիռն է ՀՆԱ-ում (%-ով): 2022թ. երկրորդ եռամսյակի գնահատականը նախնական է և կարող է հետագայում փոփոխվել՝ կախված ՀՆԱ փաստացի տվյալների հիման վրա վերահաշվարկի արդյունքներից:

2. Վարկավորման շուկայում շարունակվել են 2022թ. տարեսկզբից արձանագրված վարկավորման աճի միտումները, որոնք նկատելի են եղել վարկավորման բոլոր ոլորտներում: Նմանատիպ զարգացումների արդյունքում Ֆինանսական ցիկլի ինդեքսը նախորդ եռամսյակի համեմատ աճել է և գերազանցել իր մեդիան արժեքը, ինչը, սակայն, առավելապես պայմանավորված է հիպոտեկային վարկավորման բարձր աճի և անշարժ գույքի շուկայի զարգացումներով: Վերջիններիս նպաստումը բացառելու պարագայում, Ֆինանսական ցիկլի ինդեքսը թեև աճել է, սակայն դեռևս ցածր է իր մեդիան արժեքից, ինչը ընդհանուր վարկային պորտֆելի մասով դեռևս չի նախանշում ավելցուկային վարկավորում կամ ռիսկային էական դրսևորումներ:
3. Հիպոտեկային վարկավորման ոլորտում պահպանվել են նախորդող ժամանակահատվածներում արձանագրված բարձր աճի տեմպերը, որոնք ուղեկցվել են անշարժ գույքի գների արագ աճով: Հաշվի առնելով, որ վերոնշյալ աճերը համարվում են բնույթով միմյանց փոխլրացնող և փոխսնուցող՝ ԿԲ-ը գնահատում է, որ անշարժ գույքի շուկայում առկա են հնարավոր գերտաքացման<sup>2</sup> ռիսկեր<sup>3</sup>:

Վերը նկարագրված փաստերի համապարփակ վերլուծության արդյունքում **Կենտրոնական բանկը նպատակահարմար է գտնում ԿՀԲ սահմանաչափը թողնել անփոփոխ՝ 0% մակարդակում: Միևնույն ժամանակ, Կենտրոնական բանկը կարևորում է հիպոտեկային վարկերի տրամադրման գործընթացներում Ֆինանսական կազմակերպությունների կողմից ռիսկերի գնահատման խելամիտ և զգուշավոր մոտեցումների կիրառումը:**

---

<sup>2</sup> Անշարժ գույքի հիմնարարներով պայմանավորված գնի գնահատման մեթոդաբանությունը առավել մանրամասն ներկայացված է ՀՀ ԿԲ 2021թ. Ֆինանսական կայունության հաշվետվության Ներգիր 3-ում, որը հասանելի է հետևյալ հղումով՝ [https://www.cba.am/AM/periodicals/Stability%20report\\_2022.pdf](https://www.cba.am/AM/periodicals/Stability%20report_2022.pdf)

<sup>3</sup> Այս ոլորտի զարգացումները հասցեագրելու նպատակով ԿԲ-ը ս. թ. ապրիլից կիրառում է պահանջ/գրավի արժեք առավելագույն մակարդակը սահմանափակող մակրոպրոդենցիալ գործիքը